ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. երրորդ նախադասության «կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք» բառերը փոխարինել «եթե հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում աշխատողի կողմից չի կատարվել այլ աշխատանք» բառերով:

2. լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում աշխատողի կողմից այլ աշխատանք կատարելու բոլոր դեպքերում հարկադիր պարապուրդի համար վճարումը հաշվարկվում է հիմք ընդունելով աշխատողի՝ նախկինում և հարկադիր պարապուրդի ժամանակահատվածում ստացած աշխատավարձերի դրական տարբերությունը:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:

2. Սույն օրենքի պահանջները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարկադիր պարապուրդի հատուցման պարտականությունների նկատմամբ: